Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-992[1]-24.12.2024-ԱՍ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23.1-ին հոդվածի՝

1) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակվում է, եթե նրա՝ հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) ստացվել է հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի (140 օրվա) ընթացքում ու հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ նա հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:»,

2) 4-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին մասով.

«4.1. Հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) առաջին օրվա վերաբերյալ տեղեկատվությունը սույն հոդվածի 4-րդ մասում նշված կարգով ստանալուց հետո՝ մինչեւ մայրության նպաստ նշանակելը կամ վճարելը անձի մահվան դեպքում նպաստը նշանակվում եւ վճարվում է կամ նպաստը նշանակելուց հետո մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը վճարվում է մահացողի ընտանիքի անդամին (ամուսնուն, ծնողին, չափահաս զավակին, 14 տարեկան եւ դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով անձի մահվան օրվա դրությամբ նրա հետ բնակության նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված անձին)՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվան օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում լիազոր մարմին ներկայացնելու դեպքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում անձի մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը ենթակա է ժառանգման:»:

Հոդված 2. Օրենքի 23.2-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադերել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Չաշխատող անձին (այդ թվում՝ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձին), իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակվում է (անձը ձեռք է բերում մայրության նպաստ ստանալու իրավունք) մայրության նպաստի իրավունք ունեցող անձի հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ

գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգից ստանալուց, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքում՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:»,

2) 1-ին մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին մասով՝

«1.1. Անձի հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացվում են «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» օրենքի համաձայն:»,

3) 2-րդ մասում «Չաշխատող անձին» բառերը փոխարինել «Սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում» բառերով, իսկ «չաշխատող անձին» բառերը հանել:

4) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Չաշխատող անձին, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակելու եւ վճարելու համար հիմք են հանդիսանում՝

1) էլեկտրոնային առողջապահության համակարգում առկա տվյալները՝ հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ,

2) «Եկամտային հարկի, շահութահարկի եւ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայում առկա տվյալները՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ չաշխատող անձ հանդիսանալու վերաբերյալ,

3) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում ունենալու վերաբերյալ,

4) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալները,

5) Կառավարության սահմանած դեպքերում՝ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված՝ մահացողի ընտանիքի անդամի կողմից ներկայացված դիմումը եւ կից փաստաթղթերը:»,

5) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Տարածքային կենտրոնը սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքում մերժում է մայրության նպաստ նշանակելու դիմումը, եթե՝

1) դիմողը չի հանդիսանում սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված՝ մահացողի ընտանիքի անդամը, կամ

2) դիմումին կից չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը, կամ դիմումում չեն ներառվել անհրաժեշտ տվյալները, կամ

3) մահացած անձը սույն օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ չի ունեցել մայրության նպաստի իրավունք, կամ

4) մահացած անձի տվյալները չեն ստացվել սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում, կամ

5) չաշխատող անձը հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ չի ունեցել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում, իսկ օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձը հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ չի ունեցել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում:»,

6) 4-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին եւ 4.2-րդ մասերով՝

«4.1. Սույն հոդվածով սահմանված կարգով մայրության նպաստը նշանակելու եւ վճարելու դեպքում լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ ծանուցում է այն անձին, ում անվամբ մայրության նպաստի գումարը փոխանցվել է բանկ:

4.2. Սույն հոդվածով սահմանված կարգով մայրության նպաստը մայրության նպաստ նշանակելը կամ վճարելը մերժելու դեպքում լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ ծանուցում է դիմումը ներկայացնող անձին՝ նշելով մերժման հիմքը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից եւ տարածվում այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո:

Հոդված 4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

Երկրորդ ընթերցում

Լրամշակված նախագիծ

Կ-992/-24.12.2024-ԱՍ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական նպաստների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 12-ի ՀՕ-154-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 23.1-ին հոդվածի՝

1) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակվում է, եթե նրա՝ հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) ստացվել է հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի (140 օրվա) ընթացքում ու հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ նա հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:»,

2) 4-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին մասով.

«4.1. Հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) առաջին օրվա վերաբերյալ տեղեկատվությունը սույն հոդվածի 4-րդ մասում նշված կարգով ստանալուց հետո՝ մինչեւ մայրության նպաստ նշանակելը կամ վճարելը անձի մահվան դեպքում նպաստը նշանակվում եւ վճարվում է կամ նպաստը նշանակելուց հետո մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը վճարվում է մահացողի ընտանիքի անդամին (ամուսնուն, ծնողին, չափահաս զավակին, 14 տարեկան եւ դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով անձի մահվան օրվա դրությամբ նրա հետ բնակության նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված անձին)՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվան օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում լիազոր մարմին ներկայացնելու դեպքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում անձի մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը ենթակա է ժառանգման:»:

Հոդված 2. Օրենքի 23.2-րդ հոդվածի՝

1) 1-ին մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«1. Չաշխատող անձին (այդ թվում՝ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձին), իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակվում է (անձը ձեռք է բերում մայրության նպաստ ստանալու իրավունք) մայրության նպաստի իրավունք ունեցող անձի հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային

առողջապահության համակարգից ստանալուց, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքում՝ դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:»,

2) 1-ին մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ 1.1-ին մասով՝

«1.1. Անձի հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացվում են «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների մասին» օրենքի համաձայն:»,

3) 2-րդ մասում «Չաշխատող անձին» բառերը փոխարինել «Սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում» բառերով, իսկ «չաշխատող անձին» բառերը հանել:

4) 3-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«3. Չաշխատող անձին, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակելու եւ վճարելու համար հիմք են հանդիսանում՝

1) էլեկտրոնային առողջապահության համակարգում առկա տվյալները՝ հղիության եւ ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ,

2) «Եկամտային հարկի, շահութահարկի եւ սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» օրենքով սահմանված տեղեկատվական բազայում առկա տվյալները՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ չաշխատող անձ հանդիսանալու վերաբերյալ,

3) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում ունենալու վերաբերյալ,

4) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալները,

5) Կառավարության սահմանած դեպքերում՝ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված՝ մահացողի ընտանիքի անդամի կողմից ներկայացված դիմումը եւ կից փաստաթղթերը:»,

5) 4-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«4. Տարածքային կենտրոնը սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքում մերժում է մայրության նպաստ նշանակելու դիմումը, եթե՝

1) դիմողը չի հանդիսանում սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված՝ մահացողի ընտանիքի անդամը, կամ

2) դիմումին կից չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը, կամ դիմումում չեն ներառվել անհրաժեշտ տվյալները, կամ

3) մահացած անձը սույն օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն՝ չի ունեցել մայրության նպաստի իրավունք, կամ

4) մահացած անձի տվյալները չեն ստացվել սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում, կամ

5) չաշխատող անձը հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ չի ունեցել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում, իսկ օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձը հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ չի ունեցել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում:»,

6) 4-րդ մասից հետո լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր՝ 4.1-ին եւ 4.2-րդ մասերով՝

«4.1. Սույն հոդվածով սահմանված կարգով մայրության նպաստը նշանակելու եւ վճարելու դեպքում լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ ծանուցում է այն անձին, ում անվամբ մայրության նպաստի գումարը փոխանցվել է բանկ:

4.2. Սույն հոդվածով սահմանված կարգով մայրության նպաստը մայրության նպաստ նշանակելը կամ վճարելը մերժելու դեպքում լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ ծանուցում է դիմումը ներկայացնող անձին՝ նշելով մերժման հիմքը:»:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից եւ տարածվում այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակության առաջին օրը 2025 թվականի սեպտեմբերի 1-ն է կամ դրանից հետո:

Հոդված 4. Սույն օրենքից բխող ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ վեցամսյա ժամկետում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Կ-992-24.12.2024-ԱՍ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխությունը, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	Կառավարություն	**6-րդ հոդված**	Նախագծի 6-րդ հոդվածի 1-ին կետով գործող օրենքի 22-րդ հոդվածի12-րդ և 16-րդ մասերի նոր խմբագրությամբ ներկայացված ձևակերպումները մտքի արտահայտման իմաստային առումով հստակեցման կարիք ունեն, ինչով պայմանավորված էլ առաջարկվում է՝ 1. 12-րդ մասում՝ «առաջանալու օրվա» բառերից հետո լրացնել «դրությամբ» բառը, 2. իսկ 16-րդ մասում՝ «6-րդ մասերով» բառերից հետո «սահմանված» բառը: 3. Միևնույն ժամանակ Օրենքի նույն՝ 22-րդ հոդվածի 18-րդ մասի՝ նախագծով առաջարկվող խմբագրությունում հղում է կատարվում նույն հոդվածի «15.17-րդ» մասերին (նշված մաս չկա): Այս կապակցությամբ առաջարկում ենք խնդրո առարկա դրույթում «15.17-րդ» բառը փոխարինել «15-17-րդ» բառերով:	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	**7-րդ հոդված**	Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 24-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված է	Ընդունվել է:	Ընդունվել է:

			կարգավորում (ընթացակարգ) միայն վարձու աշխատողի համար, իսկ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի պարագայում խնդրո առարկա դրույթում տվյալ ընթացակարգի մասով (էլ. առողջապահական համակարգից տեղեկատվություն ստանալու և ՊԵԿ-ին փոխանցելու վերաբերյալ) որևէ կարգավորում առկա չէ: Ըստ այդմ, առաջարկվում է նոր խմբագրությամբ շարադրվող՝ Օրենքի 24-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին նախադասության մեջ «Վարձու աշխատողի» բառերից հետո լրացնել «կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի» բառերը, իսկ 2-րդ նախադասության «վարձու աշխատողի գործատուին» բառերից հետո՝ լրացնել «կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին» բառերը:		
3.	Կառավարություն	**9-րդ հոդված**	1. Նախագծի 9-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող՝ 26-րդ հոդվածի 1-ին մասում կիրառվող «զավակ» եզրույթի տարընկալումից խուսափելու նպատակով առաջարկվում է կիրառել «չափահաս զավակ» բառերը: 2. Նախագծի 9-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող՝ 27-րդ հոդվածի 7-րդ մասում առաջարկվում է «ճշտված հաշվարկի» բառերը փոխարինել «հաշվարկի (այդ թվում՝ ճշտված)» բառերով՝ այդ ձևակերպումները համապատասխանեցնելով նույն հոդվածի	Ընդունվել է: Ընդունվել է:	Ընդունվել է: Ընդունվել է:

			2-րդ մասով սահմանված ձևակերպումներին:		
4.	Կառավարություն	**12-րդ հոդված**	Նախագծի 12-րդ հոդվածում առաջարկում ենք «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է:
«ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԻԾ					
1.	Կառավարություն	**1-ին հոդված**	1-ին հոդվածով առաջարկվող փոփոխությամբ՝ «Պետական նպաստների մասին» օրենքի 23.1-ին հոդվածում նոր շարադրվող՝ 4.1-ին մասում «զավակ» եզրույթի տարընկալումից խուսափելու նպատակով առաջարկվում է կիրառել «չափահաս զավակ» բառերը	Ընդունվել է:	Ընդունվել է:
2.	Կառավարություն	**2-րդ հոդված**	Նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ մասով Օրենքի 23.2-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասի 5-րդ կետում բացակայում է կարգավորում օտարերկրյա քաղաքացու մասով: Ըստ այդմ, խնդրո առարկա դրույթում առաջարկվում է «հասցեով հաշվառում» բառերից հետո կետը լրացնել «, իսկ օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձը հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ չի ունեցել Հայաստանի	Ընդունվել է:	Ընդունվել է:

			Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում» բառերով:		
3.	Կառավարություն	**4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածում առաջարկում ենք «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը:	Ընդունվել է:	Ընդունվել է: